ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/29Հ

ք. Երևան <<17>> նոյեմբեր 2016թ.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա. Մկրտչյանի, որը գործում է նախարարության կոմիտեի հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Խաչիկյանի ու «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի, որոնք հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, (այսուհետև՝ Կապալառուներ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են սույն պայմանագրի Հավելվածում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ՝ 474000 (չորս հարյուր յոթանասունչորս հազար), քան պայմանագրի գինն է՝ Ծառայության մնացած մասը կմատուցվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

«ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ-ի ու «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից սույն պայմանագրի կատարման շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելիս, ընդհանուր գործերը վարում է «ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ-ն:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011005940
ՀՎՀՀ 02565837

Քաղաքաշինության նախագծերի աշխատակազմի
ղեկավարի պաշտոնակատար

Ա. Մկրտչյան

Կ.Տ.

Կապալառու

«ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ
Ք. Երևան, Երզնկյան 20
ՀՎԲ Հայաստան Բանկ
Հ/Հ 1606200308...
ՀՎՀՀ 00...

տնօրեն Է. Խ...

Կ.Տ.

Կապալառու

«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան 19, բն. 23
ՀԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220...2597000
ՀՎՀՀ 0125...

տնօրեն Ս. Սար...

Կ.Տ.

Հավելված 1
<<17>>_ նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/29Հ ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքների հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման

1.	**Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**	
	Շինմոնտաժային աշխատանքների իրագործման բոլոր փուլերում դրանց նկատմամբ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143՝ «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում» հրամանով հաստատված:	
2.	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**	
	Հեղինակային հսկողության իրականացում ըստ համաձայնեցված նախագծի:	
3.	**Տեխնիկական առաջադրանք**	
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:	
	Հսկողության միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված պահանջներին ու նախագծային լուծումներին:	
	Հսկողության միջոցով շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում նախագծային լուծումներին առնչվող խնդիրների բացահայտման, անհրաժեշտ լուծումների և Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման ապահովում:	
	Շինարարության վարման ընդհանուր մատյանում նախագծային լուծումների փոփոխությունների, լրացումների և շեղումների վերաբերյալ գրառումների ու Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման և/կամ տեղեկացման ապահովում:	
	Ծառայության մատուցման ապահովում պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Պատվիրատուի հատուկ կանչով:	
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:	
	Հսկողության արդյունքներով ամենամսյա հաշվետվությունների ներկայացում:	
4.	**Ծառայության մատուցման ժամկետը**	
	սկիզբը	**ավարտը**
	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

Պատվիրատու
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011005940
ՀՎՀՀ 02565827

Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի
ղեկավարի պաշտոնակատար

Ա. Մկրտչյան

Կապալառու
«ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ
Ք. Երևան, Երզնկյան փ. 1/20
<ՎՏԲ Հայաստան Բանկ> [illegible]
Հ/Հ 16062003[illegible]
ՀՎՀՀ 00[illegible]

տնօրեն Է. Խաչ[illegible]

Կապալառու
«ԱՍ-ՆԱԽԱ[illegible]
Ք. Երևան, Բաղ[illegible]յան 19₂, բն. 23
<ԱԿԲԱ Կրեդիտ [illegible] Բանկ> ՓԲԸ
Հ/Հ 2205[illegible]2597000
ՀՎՀՀ 01256867

տնօրեն Ս. Սա[illegible]

Կ.Տ.

Հավելված 2
<<17>>_ նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/29Հ ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա ենը Տարի
1.	Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ											474000	474000	474000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011005940
ՀՎՀՀ 02565827

Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Մկրտչյան
Կ.Տ.

Կատարող
«ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ
Ք. Երևան, Երզնկյան 1/20
ՀՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 160620..3083800
ՀՎՀՀ 00150574
տնօրեն Է. Խաչ...
Կ.Տ.

Կատարող
«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաբաջանյան 19, բն. 2
ՀԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» Փ...
Հ/Հ 220...397000
ՀՎՀՀ 01256867
տնօրեն Ս. ...յան

«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ»
"AC-НАХАГИЦ"
"AS-NAKHAGITS"
01256867

Հավելված 3
<<17>>_ նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/29Հ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս

_____ *և*

*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____*, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<14>>_ նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/29Հ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԴ - 33

«11» ապրիլ 2016թ.

<ՎԻԼ-ՍԵՄ> ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Գործընկեր-1», ի դեմս տնօրեն Է. Խաչիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ> ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Գործընկեր-2», ի դեմս տնօրեն Ս. Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. *Պայմանագրի առարկան*

1.1. Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-1038-րդ հոդվածներին համապատասխան միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու համար՝ իրականացնելով Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

1.2. Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

1.2.1. Գործընկեր-1-ը՝ որպես ավանդ ներդնում է համապատասխան լիցենզիաները, անհրաժեշտ քանակի աշխատուժ՝ աշխատողներ, տեխնիկական միջոցներ՝ սարք-սարքավորումներ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործունեության իրականացման համար:

1.2.2. Գործընկեր-2-ը՝ որպես ավանդ ներդնում է մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ՝ համապատասխանելով ՀՀ ֆինանսների նախարարության հարցման պահանջներին, սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործունեության իրականացման համար:

2. *Ընդհանուր գործերը վարելը*

2.1. Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է Գործընկեր-1-ը:

2.2. Երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր-1-ի լիազորությունը հավաստվում է Գործընկեր 2-ի կողմից նրան տրված լիազորագրով:

2.3. Կողմերի համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը վարում է Գործընկեր 1-ը:

2.4. Կողմերից յուրաքանչյուրը, անկախ այն բանից, լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը, թե՝ ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

3. *Կողմերի ընդհանուր գույքը*

3.1. Կողմերի ներդրած գույքը, որի նկատմամբ մինչև ներդրումը նրանք ունեին սեփականության իրավունք, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքում արտադրված արտադրանքը և այդպիսի գործունեությունից ստացված պտուղներն ու եկամուտները համարվում են նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը:

3.2. Կողմերի ներդրած գույքը, որին նրանք տիրապետում էին սեփականության իրավունքից տարբերվող հիմքերով, օգտագործվում է ի շահ Կողմերի և նրանց ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի հետ կազմում է մասնակիցների ընդհանուր գույքը:

3.3. Կողմերն ընդհանուր գույքն օգտագործում են ընդհանուր համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանով սահմանված կարգով:

3.4. Ընդհանուր գույքի պահպանման կապակցությամբ՝ մասնակիցների պարտականությունները և այդ պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերի հատուցումը կատարվում է համատեղ գործունեությունում Կողմերի ներդրած ավանդներին համամասնորեն:

4. Շահույթի բաշխումը

4.1. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է յուրաքանչյուր ամիս:
4.2. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է Կողմերի միջև համաձայն յուրաքանչյուր կողմի կատարած աշխատանքի:

5. Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար

Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրն ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝ անկախ դրանց ծագման հիմքից:

6. Բաժնեմասերի ստացման կարգը

6.1. Կողմերն իրավունք ունեն ազատ տնօրինելու ընդհանուր բաժնային սեփականությունում իրենց պատկանող բաժնեմասը՝ մյուս կողմի՝ այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի պահպանման պայմանով:
6.2. Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի կիրառման կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

7. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործունեության իրականացման ավարտը՝ ներառյալ երրորդ անձանց կողմից պահանջների և այլ հարաբերությունների հետ կապված հարցերի և խնդիրների ամբողջովին լուծման համար անհրաժեշտ ժամկետը:
7.2. Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմին՝ դուրս գալու օրվանից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ:
7.3. Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունն ստացվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, Կողմերը պետք է բաժանեն ընդհանուր բաժնային սեփականություն համարվող գույքը, ինչպես նաև պարտավորությունները:
7.4. Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝ սնանկ ճանաչելու, մահվան կամ սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքերում:

8. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր-1

<ՎԻԼ-ՍԵՄ> ՍՊԸ
Ք. Երևան, Երզնկյան փ. 1/20
<ՎՏԲ Հայաստան Բանկ> Մոսկվա մ/6,

Ընկերության հ/հ 16062003083500

Ընկերության ՀՎՀՀ 00150574

տնօրեն՝ –Է. Խաչիկյան
(ստորագրություն)

Գործընկեր-2

<ՀԱՍ-ՆԱԽԱԳԻԾ> ՍՊԸ
Ք. Երևան, Բաբաջանյան 19շ, բն. 23
<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ> ՓԲԸ

հ/հ 22030129597000

ՀՎՀՀ 02256867

տնօրեն՝ – Ս. Սարգսյան
(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

/17.11.2016 թ. կնքած N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–16/29Հ պայմանագրի/

ք. Երևան <<18>> 04 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ-ն ի դեմս՝ ընկերության տնօրեն Է. Խաչիկյանի և <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն ի դեմս՝ ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի, որոնք հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ-ի ու <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի միջև 17.11.2016թ. կնքված ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–16/29Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել 412 970 (չորս հարյուր տասներկու հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 17.11.2016թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–16/29Հ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011773, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան փ. 1/20
<< ՎՏԲ Հայաստան Բանկ >> ՓԲԸ Մալաթիա մ/6
Հ/Հ 16062003083500
ՀՎՀՀ 00150574

Տնօրեն՝ _______________ Է. Խաչիկյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 19 ... 23
<< ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ >> ՓԲԸ
Հ/Հ 2203101225970000
ՀՎՀՀ 01256867

Տնօրեն _______________ Ս. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1
17.11.2016 թ. կնքած N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–16/29Հ պայմանագրի՝
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 06, խումբ 01, դաս 01, ծրագիր 01)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	147 500	147 500	147 500	412 970	412 970	412 970	412 970	412 970	412 970	412 970

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011773, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
<<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան փ. 1/20
<< ՎՏԲ Հայաստան Բանկ>> Մոսկվա մ/ճ
Հ/Հ 16062003083500
ՀՎՀՀ 00150574

Տնօրեն՝ Է. Խաչիկյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 19 շ. բն. 23
<< ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 22031042597000
ՀՎՀՀ 01256867

Տնօրեն Ս. Սարգսյան
(ստորագրություն)